Մեր պաշտոնյաների Ամանորի ցանկությունները – թերթ, «Առավոտ», Ե., 28.12.2000

*Լավատեսները հավատում են, որ եթե Ամանորի գիշերը ցանկություն պահեն՝ անպայման կկատարվի: Ամանորի նախաշեմին ակամա լավատես են դառնում, այնպես որ՝ փորձեցինք կրթական համակարգի ղեկավար այրերից ճշտել՝ որն է նրանց Ամանորի ցանկությունը:*

Երևանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը այսպես արձագանքեց Ամանորի իր ցանկությունը բացահայտելու մեր խնդրանքին. «Պարզ չէ՞… որ խաղաղություն լինի, մարդիկ աշխատանք ունենան, որ ղեկավար մարդիկ հասկանան, թե ինչի համար են ղեկավար (փոքր լռությունից հետո հեռատեսորեն հավելոց – Ն.Հ.), ոնց որ թե հիմա ստացվում է, դա իմ կարծիքն է»: